

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՕՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻԻ ԴԵՍՊԱՆԸ



Դոնի Ռոստովի Հայ-ռուսական բարեկամության թանգարանի գեղեցիկ դահլիճը կրկին մարդաշատ էր: Երեկ էին հայոց լեզվի շատագույներ, գրքասերներ, ուսուցիչներ, լրագրողներ, արվեստասերներ ու արվեստագետներ, ուսանողներ ու թանգարանի աշխատակիցներ, հյուրեր Չալթրից և այլ բնակավայրերից:

Բոլորին մեկտեղել էր սերը մայրենիի հանդեպ և սերը հատկապես այն մարդու հանդեպ, ով իր կյանքը դարձրել է համակ նվիրում հայոց լեզվին ու մշակույթին:

Գրքի շնորհանդես է... Եվ օրվա հերոսը Շողիկ Սիմավոնյանն է, մեր շատ սիրելի ու հարգարժան Ալեքսանդրա Գեորգևնան:

Քիչ բան են ասում նրա մասին տիտղոսակիր այս բառերը՝ հայոց լեզվի և գրականության վաստակավոր ուսուցիչ, աշխատանքի վետերան, «Հայոց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթի բազմակի հաղթող, «Մայրենի լեզվի պաշտպան», «Մայրենի լեզվի դեսպան» մեդալակիր և այլն, և այլն...

Այս թվարկումը կարելի է անվերջ շարունակել, քանզի 40 տարվա մանկավարժական աշխատանքի ճանապարհ է անցել Ալեքսանդրա Գեորգևնան, այն օրից, ինչ սիրունատես, երգուպարի սիրահար աղջիկը (Դոնի նախնական արմատներով), ավարտելով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը 1969 թ. եկավ իր պապերի հիմնած Չալթր գյուղը հայոց լեզու դասավանդելու տեղի դպրոցում: Միաժամանակ թղթակցում էր համայնքի օրգան թերթին:

Այստեղ էլ գտավ կյանքի իր ընկերոջը Էդվարդին, որի հետ մինչ այսօր կիսում է իր կյանքի ուրախություններն ու տրիստությունները: Ալեքսանդրա Գեորգևնան երկու շնորհաշատ դուստրերի մայր է, երկու սիրելի թոռնիկների բարի ու հոգատար տատիկ: Ալեքսանդրա Գեորգևնան նաև 4 գրքի հեղինակ է և այսօրվա միջոցառման հերոսը:

Դահլիճում նստածներից շատերը նրա սաներն են, ովքեր եկել են նաև գնահատելու իրենց ավագ ընկերոջ վաստակը, երախտագիտության խոսք ասելու:

...Մեր ուսուցիչներից շատերը օգտվում են Ալեքսանդրա Գեորգևնայի «Հայերեն և ռուսերեն այբուբենները բառահանելուկներում» (Армянский и русский алфавиты в кроссвордах) գրքից:

Այն կազմված է մեծ հմտությամբ ու ջանասիրությամբ և շատ ուսանելի է:

Մակայն խոսքն այսօր նրա մեկ այլ աշխատության վերջերս լույս տեսած «Նոր Նախիջևանի բարբառի հայ-ռուսերեն դրայրոցական թեմատիկ բառարան»-ի մասին է: (Հեղինակը գիրքը նվիրում է Դոնի հայության Դոնի մարզում վերաբնակեցվելու 240-ամյակին):

Սա մի աշխատություն է, որի վրա երկար տարիների համառ ու տրնաջան աշխատանք է կատարվել: Ալեքսանդրա Գեորգևնան գիտնականի հմտությամբ համադրել է նախիջևանյան բարբառի մասին մինչ այդ գոյություն ունեցող բառարանները: Նրանցում եղած բացթողումները լրացնելը, սեփական նորամուծությունները հիմնավորելը դարձրել է իր գիրք-բառարանի հիմնական արժեքն ու ասելիքը: Բառարանը նախատեսված է Նոր Նախիջևանի բարբառի նմանությունն ու տարբե-




րությունը արևելյան գրական հայերենի հետ համեմատելու, բարբառը պահպանելու, զարգացնելու և դպրոցներում գրական հայերեն սովորող աշակերտների ուսուցումը հեշտացնելու համար: Այն հայոց լեզվի բարբառների գանձարանը հարստացնում է մի ինքնատիպ ու հարուստ շերտով, որը բնազավառի նոր ուսումնասիրողներին կտա մուտքի ունեցնելու:

Շնորհավորանքի ելույթներ ունեցան Դոնի Նախիջևանի հայկական համայնքի գործադիր տնօրեն Մերգել Սայադովը, բժիշկ Գեորգի Բագդիկովը, լրագրող Նոննա Միրզաբեկովան, Չալթրի թիվ 1 դպրոցի տնօրեն Ալլա Խասպեկյանը, երգչուհի Աուրիկա Կարպոյանը, ուսուցչուհիներ Լուսինե Պետանյանը, Աննա Բեգարյանը և շատ ուրիշներ:

Շնորհակալություն ձեր բերած արժեքավոր նպաստի համար: Երախտիքի ու բարեմաղթանքների այս հեղեղը, ժպիտների ու ծաղիկների այս հրավառությունը արժանիորեն ձերն է, սիրելի Ալեքսանդրա Գեորգևնան:

Միքով՝ ձեր ազնիվ բարեկամ՝ Սոնա ԿԱՐԱՆԵՏՅԱՆ



ՀՈՒՅՄ ԵՎ ԼՈՒՅՄ

Հարատևման իույս և լույս, Բմ մայր լեզու հայերեն, Բմ սնունդն էս, իմ ճարը, Քեզանով եմ ապրում ես:

Կյանքիս տխուր պահերին՝ Հույս ես տալիս, սիրտիս: Մագնիսի պես միշտ ձգում, Գանձարանդ ես ինձ տանում,

Շփվելով քո կենարար, Բառ ու բանի գանձերին՝ Հուսավարանք ես կրկին Գտնում եմ իմ նոր ուղին:

Մակայն երբեմն ստիպված՝ Կարծես քեզից հեռանում Դայմանների բերումով՝ Մայրենիով չեմ խոսում:

Մեղավորի պես խնդրում, Աղաչում եմ ներքի ինձ, Դա մեր սփյուռքահայերիս Կյանքն է օտար երկրում:

Հարատևման իույս և լույս, Բմ մայր լեզու հայերեն, Տարածվելով ամենուր, Հնչիր մեր սերն ու երգն էս:

ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐ

Մանուշակներ, մանուշակներ, Մանկության իմ անուշ հուշեր, Քնքուշ բույրով նուրբ ծաղիկներ, Ախ, հոգիս միշտ կարոտ է ձեզ: Երբ որ գնամ ու հեռանամ, Այս աշխարհին հրաժեշտ տամ, Ամեն գարուն շիրմիս վրա, Մանուշակներ լինեն միայն ...

ԱՆՄԱՐ ԿԱՐՈՏ

Կես դար է անցել արդեն այն օրից, Երբ դուրս եկա ես իմ հայրենիքից, Ապրում եմ հեռվում կարոտն իմ սրտում, Անմար կարոտ է էլ չեմ դիմանում:

Մայր Հարենիս անընդհատ ձգում, Կանչում է սիրով, կանչում դեպի տուն: Կարոտս պայծառ, կարոտս ուժգին, Կարծես, ինձանից պարտք է պահանջում:

Անթև թռչուն եմ, ա՛խ, ինչպես թռչեմ, Բմ Հայրենիքում վաղուց տուն չունեմ, Օտարության մեջ ընտանիք կազմեցի, Ամուր հանգույցով վաղուց կապվեցի:

Իսկ Հայրենիքս կանչում է, կանչում, Ձերմ մագնիսի պես՝ ձգում է, քաշում, Կարոտս անշեղ է, սիրտս է այրում, Ուղեկցում է ինձ լույսով ամենուր:

ԲԱԼԵՆԻՆ

Պատուհանիս տակ՝ ջանել, ձյունաթույր, Առաջին անգամ ծաղկած բալենին Ձինջ սիրով լցված, բայց տագնապալից, Խորհում էր կարծես, նոր կյանքի մասին...

Անցնում են մարդիկ՝ լարված, մտահոգ, Ոչ-ոք չի տեսնում սիրուն բալենուհի, Թե ինչ գեղեցիկ պատկեր է բացվել Նուրբ թերթիկներով, կյանքի քառսում...

Իսկ բալենին լուռ, հեզ ու քնքռորեն՝ Շշջում էր միայն սեր ու խնդություն, Աղոթքով խնդրում, որ միշտ, ամենուր Լինի բարություն, սեր, խաղաղություն...